16384

361
Ц-81

1900

2010

361
Ա-81

# ՏԵՂԵԿԱԳԻՐ
## ԵՒ
# ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
## 1899 — 1900
## ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Ամրպատեանի Հայուհեաց Բար. Ընկերութեան

**ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԵՒ ՎԱՒԵՐԱՑՈՒԱԾ**
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**
**ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ**

*1900*

**ԹԱՒՐԻԶ**

Ամրպատեանի
ԴԱՎՐԻԾ

Տպարան Թաւրիզի Հայոց Արամեան դպրոցի

7082

2002

361
Զ-81
370
Զ445-ՏԵ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
ԵՐԵՎԱՆ, Մասնակ. 11
Ա. ՍՅԱՍՆԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ԵՒ

## Հաշուեցոյց 1899 Մարտ 1-ից 1900 Մարտ 1 Տարեշրջ.

Ազգային Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան հնգամեակը և վարչութեանս միամեայ (երկրորդ տարին) պաշտօնավարութեան շրջանը բոլորած լինելով՝ պարտք է համարում, ըստ օրինականութեան և ըստ կանոնագրութեան տրամադրութեան, իւր գոյն գործունէութեան համառօտ նկարագիրն յերեւան հանել՝ ի գիտութիւն յարգելի անդամների և առհասարակ Հայ հասարակութեան։

Դարձեալ վարչութիւնս իւր շնորհակալութիւնն է յայտնում Ընկերութեան ազնուաշուք անդամուհիներին, Թաւրիզի յարգելի երիտասարդութեան և հասարակութեան, նաև այլուր գտնուող բարեգործներին, որոնք իրանց բարոյական և նիւթական աջակցութեամբ քաջալերեցին Վարչութեանս և աւելի բարձրացրին ընկերութեանս անունն ու վարկը։

Ներկայ տարեշրջանում Վարչութիւնս 31 Վարչական նիստ է ունեցել, որ և իւր գործունէութեան ուղղութիւն է տուել և անհրաժեշտ խնդիրների կարգադրութեան համար խորհրդակցել։

Վարչութիւնս ըստ կարելոյն յաջողեցրել է փոքրիկ քայլեր անել կրթական ասպարիզում և այս անհրաժեշտ պահանջին մեծ կարևորութիւն է տուել։

Մեծ ուշադրութիւն է դարձրել դպրոցների վրայ՝ թէ այստեղ Թաւրիզում և թէ գաւառներում։ Թէ և ցանկալի էր դպրոցների թիւը բազմացնել, բայց միջոցների սղութեան պատճառով և ուսուցիչներ չգտնելուն համար՝ առ այժմ կարողացել է միայն մի դպրոց աւելացնել (Նազարէյում) ապագայում այս մասին աւելի բուռն կերպով և ժամանակին մտածելու պայմանով։

Այժմ Թաւրիզի Ս. Աննայեան օրիորդաց դպրոցում

1004
15988

պահում է հինգ որդեգրուհի՝ վճարելով նոցա տարեկան թոշակը, որ է 300 ղուռուշ։ Աբամեան և Ս. Աննայեան երկուս դպրոցների չքաւոր սաներից 10-ին տուել է մի մի ձեռք հագուստ, մի մի զոյգ կօշիկ և այլ դասական պիտոյքներ։

Ինչպէս խոստացել և որոշել էր՝ հինգ տարի օգնել Մուժամբարի նորահաստատ դպրոցին՝ այս տարեշրջանում ևս Վարչութիւնս որոշեալ 200 ղուռուշ ուղարկեց դպրոցի հիմնադիր և աբնօրէն Մեծ. Պ. Աբրահամ Փանուէլեանին ի գործադրութիւն անհրաժեշտ ծախքերի։

Որմի Գեարդուբադ հայաշատ գիւղում այս տարի ևս պահում է մի դպրոց, որտեղ ուսուցանում է Սամուէլ Սարգսեան անուն մի երիտասարդ պարոն։ Դպրոցի յառաջադիմութեան և ուսուցչի եռանդուն պարապմունքների մասին՝ սոյն տեղի քահանան և հասարակութիւնը երկիցս գրաւոր կերպով իրանց շնորհակալութիւններն են յայտնել։

Սուլդուզի Նաղադէյ հայ գիւղում (Քուրդստան) այս տարի հաստատեց մի դպրոց, Մեծ. Պ. Ս. Տ. Օհանեանի հաշուով, որի համար ուսուցիչ ուղարկեց նոյն տեղացի Պ. Յովնաթան Օհանեանին, որպէս ծանօթ իւր հայրենիքի պահանջներին ու հայրենակիցների բնաւորութեանն ու նիստուկացին։

Բայց ցաւ ի սիրտ պէտք է ասել, ինչպէս ամեն տեղ, այստեղ ևս նկատւում է հայ ժողովրդի նոյն անտարբերութիւնը դէպի իւր դպրոցը, իւր մանկան կրթավայրը։ Ժողովուրդը ոչնչով չի ուզում օգնել իւր ուսուցչին. կոր հայ և վառելիք անգամ զլանում է տալ։ Յիրաւի այս բանը շատ ցաւալի և պախարակելի է։ Թերևս կարելի կը լինէր ապագայում դպրոցների թիւը Գաւառներում աւելացնել՝ եթէ այս խոչընդոտները վերանային և ժողովուրդը մի փոքրիկ աջակցութիւն ցոյց տար։

Վարչութիւնս Բարանդուզի գաւառում ևս ուզեց այս տարի անպատճառ դպրոց հաստատել, բայց յարմար ուսուցիչ չգտնելով ստիպուեցաւ իւր նպատակը գոնէ մօտիկ ապագայում իրականացնել։

Օանազան Տարաղաղործութիւնների (Մանածէ և բրդ-



դէ) համար բացուած գործարանը, որի համար մինչև իսկ Պոլսից մեծ քանակութեամբ թել բերուեցաւ և մեծածախս գործիքներ պատրաստուեցաւ, իւր եօթն ամեայ գոյութեան ընթացքում օգնութեան ձեռք կարկառեց շատ օտարական և տեղացի չքաւոր հայ ընտանիքների՝ տալով սոցա միևնոյն ժամանակ հաց և գործ։ Բայց ցաւ ի սիրտ պէտք է ասել՝ միջոցների սղութեան, անպատասխան դիմումների և յարմար վարպետի ու գործաւորների չգոյութեան պատճառով՝ առժամանակեայ դադարման մատնուեցաւ, յարմար առթում և միջոցները ներած պարագայում վերսկսելու պայմանով։ Այս մասին Վարչութիւնս ժամանակին թերթերի և մասնաւոր նամակների միջոցաւ յայտարարել է և այժմ էլ պատիւ ունի խնդրելու բարեգործ ազգայինների ուշադրութիւնը։

Գործարանի Վարպետին Ընկերութիւնս ամսական 100 ղուռուշ ռոճիկ ևգնալ դալու ճանապարհածախսից բացի 200 ղ-նի մի օգնութիւն արաւ, այլև մի գործիք նուիրեց, որպէսզի աշխատէ և իւր խեղճ փոքրիկներին պահէ։ Վարչութիւնս իւր կողմից մի փոքրիկ գումարով օգնեց սոյն վանեցի վարպետին և ուղարկեց Որմի իւր արհեստով պարապելու։

Վարչութիւնս նոյն եռանդով և ուղղութեամբ յառաջ է տանում հինգ տարուց ի վեր գոյութիւն ունեցող Պոլ-Ամերիկեան Արհեստանոցը և Մանկապարտէզը՝ ղեկավարութեամբ կովկասեցի յարգելի օրիորդ Մ. Պետրոսեանի, որ հաստատութեանս հիմնուելուց ի վեր վարում է ուսուցչուհու պաշտօնը։ Յարգելի օրիորդի գործի ծանրութիւնն ի նկատի ունենալով՝ Վարչութիւնս տեղացի ընթացաւարտ Սանուհիներից մէկին՝ յարգ. Օր. Վ. Գրիգորեանին նորան օգնական նշանակեց։

Արհեստանոցում սովորող աշակերտուհիները 24 հոգի են, որոնցից 8-ը ձրիավարժ են։

Մանկապարտիզում սովորում են 54 մանուկներ, որոնցից 16-ը ձրիավարժ են, վերջիններս Ընկերութիւնից ստանում են և՛ հագուստ։

Ծ. Նիւթերի բազմատեսակութեան պատճառով պարապ-

մունքներն այս տարի աւելի կանոնաւոր և աւելի արդիւնաւոր են եղել:

Շնորհիւ Թաւրիզի յարգելի սիրողների աջակցութեան՝ Վարչութիւնս այս տարեշրջանում տուել է Տնտաձաւ, Վիճակաւոր, Մանկական ներկայացում և մի մեծ ներկայացում յօգուտ Ընկերութեանս անհրաժեշտ ծախքերի և պէտքերի, որի համար Վարչութիւնս իւր խորին շնորհակալութիւններն է յայտնում յարգելի սիրողներին:

Ընդունել է 2 օրինակ «Բանասէր» Բասմաճեանի (Փարիզ), որոնցից մէկը նուիրել է Աբրահամ և Ս. Աննայեան դպրոցների Մանկ. Գրադարանին, միւսը Ընկ. Կար ու Չեմ Աբրհամանոցին: Վերջին հաստատութեան համար բերել է տալիս և «Մշակ» թերթը՝ օրիորդների ընթերցանութեան, մտաւոր պաշար ձեռք բերելու և առօրեայ կատարուող դէպքերի հետ ծանօթանալու համար:

Ախալքալաքի դաւառում պատահած սարսափելի արկածը և արկածեալների աղաղակը Վարչութեանս սրտում արձագանք գտաւ, առայս Ընկերութեան սուղ միջոցներից 50 ռուբլու մի ընչին օգնութիւն արաւ երկրաշարժից վնասուածներին՝ «Մշակի» խմբագրութեան միջոցաւ:

100 զրանի մի ամենափոքր նուէրով Վարչութիւնս պարտք համարեց իւր յարգանքներն ու համակրութիւնն յայտնել հռչակաւոր և բազմաշնորհ Մանկավարժ Մեծ. Պ. Սեդրակ Մանդինեանին՝ իւր 25 ամեայ յոբելեանի առթով:

Տեղոյս հաքաւորներին, ինչպէս միշտ՝ այս տարեշրջանում ևս չէ զլացել ըստ կարելոյն օգնել և նոցա բեռը մասամբ թեթևացնել:

---

Ներկայ տարեշրջանում Ընկերութիւնս ունեցել է 84 անդամ, որոնցից 3-ը Մշանջենական անդամներ են՝ Դեր. Սուքիաս Աբք Եպս. Պարզեանց, Ամենապատիւ Տ. Տ. Ամիսիմ Գրիգոր և Շուշանիկ Տէր Մարգարեան:



3-ը Պատուոյ անդամներ՝ Ամենապատիւ Տ. Տ. Աննա Սուրբէկեանց, Հեղինէ Աստուածանց և Աննա Թէլէթեանց: Մնացեալ 78-ը հիմնական և տարեկան անդամներ են:

Վարչութիւնս պատիւ ունի յայտարարելու յարգելի Հասարակութեան, որ պատրաստ է ընդունել Պատուաւոր, Մշանջենական, Հիմնական, Տարեկան անդամներ Ընտանեաց ևս, եթէ բարեհաճեն պատուելու և խրախուսելու Ընկերութեանս:

Ծանօթ. Պատուոյ անդամ կարող են լինել նորանք որոնք ընկերութեանս մի մեծ ծառայութիւն կամ օգնութիւն կանեն. Մշանջենական, որոնք առնուազն 50 թուման (100 ր.) միանուագ կը վճարեն. Հիմնական, որոնք առնուազն 5 թ. (10 ր.) կը վճարեն տարեկան. իսկ Տարեկան նորանք, որոնք 2 թմն. (4 ր.) կը վճարեն տարեկան:

## ՍՏԱՑՈՒԱԾ ՆՈՒԷՐՆԵՐ

Վարչութիւնս պատիւ ունի մեծաւ յարգանք յայտնելու իւր շնորհակալութիւնները հետևեալ յարգելի անձնաւորութեանց, որոնք չեն զլացել ներկայ տարեշրջանում իւրեանց նիւթական օգնութեամբ բարեբաւելու Ընկերութեանս դրութիւնը և քաջալերելու Վարչութեանս:

Մեծ. Պ. Ս. Տէր Օհանեանից 1200 զրան ընկերութեանս անունով մի դպրոց պահելու պայմանով, որ ամեն տարի խոստանում է վճարել: Առայս վարչութիւն այդ գումարով Սուլդուզի Նազարէյ գիւղում հաստատեց ներկայ դպրոցը:

Մեծ. Պ. Օ. Գրիգորեանի միջոցաւ երկու անդամ Ախարադի յարգելի սիրողների կողմից ուղարկուած 200 ռուբլի (1087 զրան 50 կոպ.):

Մեծ. Պ. Ալէքսան Մելիք Աղարեանից 2 հակ ածնածաոի զարդեր (100 ռուբ. արժողութեան):

Մեծ. Պ. Աւագ Մելիք Աբրահամեանի միջոցաւ Ղազրինում հանգանակուած 300 զրան:

Մեծ. Պ. Աստուածատուր Սարգսեանի միջոցաւ Սաքզուարում հանգանակուած 200 զրան:

Մեծ. Ալեքս-խան Սարգսեանից 25 վիճակախաղի տոմսակ (լոտերներ), որից գոյացաւ 44 դրամ:

Ամեստափայլ Տ. Ա. Գրինֆելդից 20 դրամ:

Ամեստափայլ „ Դ. Ադթանդիլեանից 10 դրամ:

---

Վարչութիւնս պատիւ ունի կրկին իւր շնորհակալու-

---

# ՀԱՇՈՒԵ

## ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

## 1899 —

## ՄՈՒՏՔ

Տարեշրջան

| | դրամ | կ. | դրամ | կ. |
|---|---|---|---|---|
| 1899 — Տարուայ տոկոսաբեր դրամագլուխ . | | | 21772 | 85 |
| Ստացուած անդամավճարներ . . . | 1610 | — | | |
| Ստացուած նուէրներ . . . . | 2861 | 50 | | |
| Ստացուած տոկոսներ . . . . | 2451 | 75 | | |
| Վիճակախաղից . . . . . | 1490 | — | | |
| Արհեստանոցից ծախուած նիւթեր . . | 786 | 65 | | |
| Ստացուած կարելավարձեր . . . . | 321 | — | | |
| Գործարանից ծախուած կտորներ և թելեր . | 720 | 30 | | |
| Մանկապարտիզի մանկ. տարեկան թոշակներ | 1360 | — | | |
| Արհեստանոցի աշակերտուհիների տարեկան թոշակներ . . . . . | 1020 | — | | |
| Տօնածառից և թատրոնից գոյացած զուտ արդիւնք . .. . . . . | 3057 | 75 | 15678 | 95 |
| | | | 37451 | 80 |



թիւններն ու յարգանքները յայտնելու այն բոլոր յարգելի անձանց, որոնք իրանց բարոյական և նիւթական աջակցութեամբ չգլացան օգնելու և քաջալերելու Վարչութեանս և բարձրացնելու Ընկերութեանս վարկը:

Հաշիւների և գործառնութեանց մանրամասնութիւնը իւրաքանչիւր ոք կարող է ստանալ Ընկերութ. Գանձապահից:

---

# ԿՇԻՌ

## ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐ. ԸՆԿ.

## —1900

## ԵԼՔ

Ջանի

| | դրամ | կ. | դրամ | կ. |
|---|---|---|---|---|
| Զանազան ծախքեր-գնած մանր իրեր, վառելափայտ, տպագրութեան, փոստի, մշակութեան և այլն . . . . . | 1298 | 15 | | |
| Արհեստանոցի և Մանկապարտիզի համար զընուած իրեր և նիւթեր . . . . | 1923 | 90 | | |
| Զրիավարժ սաներին թոշակ, հագուստ, կօշիկ և դասական առարկաներ . . . . | 462 | 70 | | |
| Տան վարձ՝ Արհեստանոցի և գործարանի . . | 570 | — | | |
| Գործարանի ծախք-գործիքներ, թել, վարպետի և գործաւորների վարձ և այլն . . . | 3377 | 10 | | |
| Ռոճիկներ տուած . . . . . | 6442 | 90 | | |
| Տուած նուէրներ և նպաստներ . . . | 533 | — | | |
| Զանազան անձանց տոկոսով տուած դրամ . | 22119 | 65 | | |
| Մնդուկում պատրաստ . . . . . | 724 | 40 | 37451 | 80 |
| | | | 37451 | 80 |

Ընկերութեանս հասցէն՝
« Վարչութիւն Ատրպատականի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան » .

« Société de Bienfaisance des dames Arméniennes d'Azerbaydjan, » Tauris ( Perse )

*„ Азербайджанское Женское Благотворительное Общество “ въ Тавризѣ ( Персія )*

Վարչութեան Անդամներ

| | |
|---|---|
| Նախագահ՝ | Հեղինէ Յորժ |
| Փոխ-Նախագահ՝ | Մարիամ Նազարբէկեանց |
| Գանձապահ՝ | Փեփրոնէ Ծերունեանց |
| Խորհրդականներ | Փեփրոնէ Յովհաննեանց |
| | Ելմասա Շահբազեանց |
| | Երանուհի Գորոյեանց |
| | Մանիա Գրիգորեանց |

Ատրպատականի
ԴԱՂՈՒԷՍ

1900 Մարտ 1
Թաւրիզ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
ԵՐԵՎԱՆ, Մասնաճ. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՏԱՄԱՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013
<< Ազգային գրադարան >>
NL0049365